ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. դեկտեմբերի 6-ից 8-ը Լոնդոն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Հայկ Արզումանի Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Լոնդոն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, 2017 թվականի դեկտեմբերի 6-ից 8-ը

4. Հրավիրող կողմը՝

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի օժանդակողների 7-րդ վեհաժողովին

6. Քննարկված թեմաները՝

2017թ. դեկտեմբերի 7-ին Լոնդոնում տեղի ունեցավ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի օժանդակողների յոթերորդ վեհաժողովը, որին մասնակցում էին ինչպես գործընկերության հիմնադրամին (այսուհետ՝ Հիմնադրամ) օժանդակող երկրների ներկայացուցիչները, այնպես էլ վերջինիս շահառու երկրների՝ մասնավորապես. Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի, Վրաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները: Նիստի ընթացքում հաստատվեց Հիմնադրամի 2016թ. ֆինանսական հաշվետվությունը: Քննարկվեցին

Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի և Բելառուսի համար հասանելի ֆինանսական միջոցների հոսքերը, հաստատված ծրագրերի առաջընթացն ու նոր ծրագրերի հաստատումը:

Հայաստանի վերաբերյալ նստաշրջանի ընթացքում Հիմնադրամի կողմից ներկայացվեցին Հայաստանի համար խոստացված և վճարված միջոցների շարժը, ըստ որի ներկայումս Հայաստանի համար հասանելի է 5.663.899 եվրո:

Ներկայացվեցին արդեն իսկ հաստատված Երևանի քաղաքային լուսավորության ծրագրի, Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ թափոնների կառավարման և Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրերի առաջընթացները և իրականացման ժամանակացույցերը:

Վեհաժողովի ընթացքում Եվրոպական ներդրումային բանկի կողմից ներկայացվեց հանրային շենքերի էներգաարդյունավետության ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվող 5 մլն եվրո գումարի չափով դրամաշնորհը հաստատվեց օժանդակողների կողմից: Ծրագրի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից ներգրավվել են 7 մլն եվրո գումարի չափով ոչ սուվերեն վարկային միջոցներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ներկայացվեց բազմաբնակարան շենքերի համար Հայաստանի կանաչ տնտեսության հնարավորությունների ծրագիրը 3.6 եվրո դրամաշնորհի ստացման համար: Ծրագիրը լրացուցիչ կքննարկվի գրավոր ընթացակարգով:

Վեհաժողովի ընթացքում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Արզումանի Հարությունյանի կողմից ներկայացվեց ՀՀ կառավարության կողմից իրականացվող էներգետիկ քաղաքականության հիմնական առաջնահերթությունները. մասնավորապես անդրադարձ կատարվեց Երևանում նոյեմբերին կայացած էներգետիկ համաժողովին, որը լայն հնարավորություններ կարող է ընձեռնել միջազգային ֆինանսական ինստիտուտներին, ներդրողներին և այլ շահագրգիռ անձանց: Անդրադարձ կատարվեց ներկայումս պետության կողմից տարվող ֆիսկալ կոնսոլիդացիոն քաղաքականությանը, որը միտված է պետական պարտքի կայունացմանը

և նշվեց, որ այս պարագայում նոր սուվերեն վարկային միջոցների ներգրավումը հնարավոր է փոխարինել ոչ սուվերեն կամ մասնավոր վարկավորման մեխանիզմներով, և համայքները համապատասխան բարեփոխումների արդյունքում կարող են վարկունակ լինել և իրականացնել արդյունավետ ծրագրեր: Նշվեց նաև, որ Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի պարագայում անհրաժեշտ է նաև հետագա մշտադիտարկում իրականացնել վերջիններիս իրականացման փուլի նկատմամբ:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Ա. Հարությունյան